


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 28

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ, 21 1898

ԳԻՆ 3 ԱՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Քէյի վէրտի նաւատորմիդը, որոյ Բատիզ երթալը ծանուցուած էր անցեալ շաբթու, Մարթենի կղզեաց մտերն երևան ելաւ նորէն: Ըստ պանիական խորհուրդին մ'էր առջի լուրը:

—Մարթենի կղզեաց դաշտական մատակարարութիւնը՝ հակառակ Ֆրանսայի յայտարարած չէզոքութեան՝ անժուր վաճառած է սպանիական զբոսականներուն. և որ աւելին է վերջերս Ամերիկացի նաւագետի մը կարեւոր մի հեռագիրն վար դրած է 24 ժամ՝ զայն Ուաշինկթըն պատերազմական նախարարութեան զրկելէ առաջ: Մտահոգութիւն ու ցասում կը պատճառեն այս դէպքեր քաղաքական շրջաններու մէջ:

—Սէնթ Թոմասէ առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ամսոյս 12ին ծովակալ Սամսըն ուժարկած է Փորթօ Րիբօյի Սան Փան քաղաքն, և հիմնադրուած է բերդերն: Ռեպուբլիկոզ զրահանաւորներն են եղած Նիւ Եօքը (չբողականաւ), Այօվա, Ինսիանա, Թէրըր և Ամֆիթրիթ: Սպանիացուց կորուստն մեծ է կ'ըսուի. իսկ ամերիկացիք կորսնցուցած են չորս հոգի միայն, որոց մին կ'Պոլսեցի է ծան Միչըլը անունով: Հաւանական է որ Հայ մ'ըլլայ այս՝ Յովհաննէս Միքայէլեան անուն: Ահա անուն փոխելու հետեւութիւն մը:

—Ուրիշ հեռագիր մը լուր կը բերէ թէ ամսոյս 11ին երեք պոստի զբոսականներ և մէկ թօրփիլանաւ՝ Ուինզլօ անուն՝ Բարտէնասի նաւահանգիստը մտած են՝ հոն գտնուած սրանիական զրահանաւորն ընկղմելու մտօք: Ինքզինքն սպանիացիք կրակի և սրածուրի ամերիկացուց վերջապէս կ'ուսուցանէ ինչ ծամի չափ: Սպանիական բերդերն փնտրուած են բաւական. իսկ Ուինզլօ, որ ծովեզրին բաւական մտեցած էր, շատ մը տեղերէ փնտրուած է, անանկ որ միւս զրահանաւորն մէկին օգնութեամբ հազիւ կըրցած է ընկղմելէ ազատիլ: Այս թօրփիլանաւին մէջ ուսմը մը պայթած ու հինգ հոգի սպաննած է, որոց մէկին անունն է ծան Վարվերես, 2 միւսնիացի: Կը կարծենք թէ Հայ մ'է այս անձ, Յովհաննէս Վարդերեսեան անուն: Մեռեալներուն մարմինները, ինչպէս նաև փնտրուած Ուինզլօն Բի Ուէսթ բերուեցան:

—Ուրիշ հեռագիր մը կ'աւետէ թէ Ուելսի միջին զրահանաւոր Ուինզլօի վրէժը լուծած է հետեւեալ օրն մոխիր դարձնելով Բարտենասի մի քանի ամրոցներն, սպաննելով թշնամիին շատ մը կռուողներ:

—Մարպըլէթ, Ուինսոմ եւ Նաշուիլ մեծ յաղթութիւն մը տարին Սինթուէճօսի առջև: Ասոնք որմբակոծեցին բերդերն, ու մի քանիներն լռեցնելէ վերջ՝ երկու նաւակ զրկեցին հեռագրական թելերն կտրելու համար: Այս վերջինք երբ կը վերադառնային, Սպանիացիք կրակի հե-

ղեղ մը տեղացին իրենց վրայ. նաւակներն ընկղմեցան. նաշուիլ օգնութիւն զրկեց ու ազատեց նաւատիրները, որոց երկուքը սպաննուած էին և 8ը վիրաւոր: Նաշուիլի նաւակեան ըսած է թէ 1000է աւելի ուսմբեր նետած էր քաղաքին մէջ և թէ վստահ էր որ անոնց գործած աւերումն մեծ էր եղած հոն: Կ'ըսուի թէ սպանիացուց կեանքի կորուստը 400ը կ'անցնի:

—Քիււայի ընդհանուր կառավարիչը հեռագրեր է Մատրիտ թէ Բարտենասի կռուին մէջ ութը սպանիացիներ միայն վիրաւորուած էին, իսկ Սինթուէճօսի կռուին մէջ 2 մեռեալ և 14 վիրաւոր ունեցած էին միայն: Այս կը յիշեցնէ վերջի Ռուսօ-Թուրք պատերազմի ատեն Տաճկաց հաղորդած լուրերուն. «մենէ երկու հոգի չէ հիւս եղան, իսկ կեանք ունեցէն 1000 մարդ մեռաւ»:

—Սպանիական նաւատորմիդը Օրէկոն մեծ պատերազմանաւին ետեւէն կը շրջի կըսեն, զայն բռնելու համար: Օրէկոն որ պատերազմը չբարտարակուելէ առաջ մեկներ էր Սան Ֆրանսիսկօն Բիւպայի կղզիներն գալու համար՝ անցեալ շաբթու Պաշիէ (Հարաւային Ամերիկայ) ճամբայ ելաւ դէպի Հիւսիս, և չի գիտցուի թէ ուր է այժմ: Կը վստացուի որ Սպանիացիք յաջողին բռնել մեծ զբոսականուր ու կցել իրենց նաւատորմիդին:

—Օմէրիա և Մուր անուն երկու դասակներ կը փնտրուին Միացեալ Նահանգաց կառավարութեան կողմէ. եթէ ասոնք ձերբակալուին՝ պատերազմական օրինաց համաձայն զընդակի պիտի բռնուին իբր դասակը: —Մատրիտէն լուր կուգայ թէ Ամերիկացիք Պաշիա Հանսա քաղաքը (Քիւպա) ուժարկած են:

—Ուաշինկթընի պատերազմական նախարարութիւնն այսուհետև ամերիկեան նաւատորմիդին վերաբերեալ լուրերն գաղտնի պիտի պահէ: Այս մասին պատուէր ու հրահանգ զրկած է ամէն կողմ:

—Մովսիս Սամսընի նաւատորմիդին 8 զրահանորները 42 հազար թըն կը կռնեն. Ըշէյնը, հինգ կըստոր, 37 հազարի չափ: Իսկ Սպանիականն՝ որ չորս զրահանորներ ունի, կը կռնէ 27 հազար: Սպանիական զրահանաւորն իւրաքանչիւրը 6,800 թօնօի չափ է. մինչ ամերիկեան Այօվան, ինսիանան ու Մասաչուսէթսը 11,000 ական թօնօրթօյի չափ են:

—Կուսի փոխադրանաւը որ անցեալները ռազմաթիւք փոխադրեց ի Քիւպայ, ունէր իր մէջ երկու թըրթակիցներ որք Բաղաքիս Ուօրլո լըրաբիլը կը ներկայացնէին: Ասոնք բռնուելով Հաւանայ զրկուեցան իբր գերի, ուր բանտարկուած են այժմ:

—Վերջերս պատերազմական նախարարութիւնն Ունեքա զրահանորը Հաւանայ զրկեց ոչ-թշնամական ճերմակ դրօշի տակ այս գերիներն ազատելու համար: Սպանիացիք յանձն առած են երկու սրանիացի գերիներ:

րու հետ փոխել այս մամուլը ներկայացուցիչներն:

—Դեռ օգնութիւն չի դրկուեցաւ Մանիլայի Դիւցազներն: Կ'ըսուի թէ եւրոպական կառավարութիւնները ճնշում բանեցուցած են Ուաշինկթընի վրայ՝ սպասել առ այժմ:

—Անցեալ երկուշաբթի օր սրանիական նախարարութիւնն հրաժարեցաւ: Թագուհին նախարարական Սպանիայի յանձնեց նոր նախարարութիւն մը կազմել:

—Ռուսիա, Ճարոն, Գաղղիա եւ Գերմանիա մտադիր են հաւաքարար ռոզդեկ Միացեալ Նահանգաց դէմ՝ այս վերջնայ Ֆիլիպին կղզիներն առած լինելուն համար:

—Անգղիոյ գաղթականական նախարարն Մր. Չամպլըյն ամսոյս 13ին ճառ մը խօսեցաւ, որոյ մէջ ըսաւ թէ Միացեալ Նահանգ և Անգղիա միանալու են ասկէ վերջ: Ռուսիա բացատրութիւն պահանջեց այս մասին. սակայն Լորտ Սալիսպըրի լրտեսը ժողովին մէջ յայտարարեց թէ Գաղթականութեան նախարարն յոչ պաշտօնէ խօսած էր իր ճառը:

—Սրանիական նաւատորմիդը դեռ չի գիտցուի ուր է. անցեալներն Կուրասօ կղզիներու առջև երեցաւ ու անուխ առնելով անհետ եղաւ նորէն: Ասոնք թէ հզօրութեամբ տըկար, բայց սրագութեամբ՝ ժամուռն է մղոն աւելի կընթանան ամերիկեան նաւատորմիդներէն, անանկ որ դժուար պիտի ըլլայ զանոնք կռուի ստիպել, եթէ շուզեն կռուի:

—Սպանիոյ Բատիզի մարտանաւերը կըսուի թէ Բանարի կղզիները գացած են, և հոն պիտի սպասեն մինչև որ ծովակալ Սէրվիլիս կռուի ամերիկացուց հետ:

—Բարտենասի առջև թօրփիլաները կտրելով զբաղող ամերիկեան նաւ մը պայթեցրէ կ'ըսեն, և 17 հոգի մեռան են: Սպանիական լուր մ'է այս, և անհաւատալի տակաւին:

—Ճէնէրալ Մէրիթ, որ Ֆիլիպին պիտի զրկուէր, մերժեց 10000 կամուր և 5,000 կանոնաւոր շօրքէ պակաս առնել իր՝ հետ՝ Տուվիլ օգնութեան երթալու համար: Պատերազմական նախարարը որ Մէրիթի ստորադաս մի պաշտօնեայն էր ներքին պատերազմի ատեն, մերժեց և սպաննացաւ նախ, բայց տեղի տուաւ վերջէն:

—Նոր շինուած Ալապամա զրահանաւոր երէկ շուր մտաւ՝ մեծ հանդէսներով: Այս նոր նաւը Սամսընի նաւատորմիդին պիտի միանայ:

—Կարծիք կայ թէ պատերազմը մէկ տարի պիտի տևէ, և ասոր համար նախագահ Մաք Գիլիլ մտադիր է եղեր 405 միլիօն տոլարի վարկ մը խնդրել Բօնիլրէսէն:

—Հավանայի մէջ մէկ հաւկիթը 12 սէնթի բարձրացած է, եւ մէկ փավնտ միսը՝ 50 սէնթ:

—Գաղղիական կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարած է թէ Ամերիկայի հետ իր ունեցած յարաբերութիւնները շատ բարեկամական

են, և թէ անգղիական մամուլը աննպաստ լուրեր կ'ստեղծէ, որպէս զի 100 տարիէ ի վեր երկու երկիրներու մէջ հաստատուած բարեկամութեան կապն յաջողի խզել:

—Սպանիոյ նորակազմ նախարարութիւնն պաշտօնի անցաւ երէկ:

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐ

Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ մեզ Մայիս 16 թուով թէ նոյն քաղաքէն մինչև հիմայ երկու Հայ կամաւորներ միացած են Ընթըլ Սամի բանակին: Ասոնց մին Աղաբազարցի է Յակոբ Այգբանեան անուն, իսկ միւսը Պարբերցի է, որուն անունն ստուգած չէ տակաւին:

—Մեր Պօսթոնի թղթակիցը կը գրէ մեզ թէ տեղւոյն կամաւորներն չեն ուզած իրենց անունն հրատարակել լրագրաց մէջ՝ անհատական պատճառներու համար:

—Մայիս 16 թուականաւ Հրատարակէն Տ. Գ. Պալթանաւ կը գրէ մեզ թէ «Տեղւոյն քաղաքապահ զօրաց գունդը մեկնեցաւ այսօր՝ կանոնաւոր բանակին միանալու: Ասոնց մէջ կոր մէկ Հայ մը՝ Տիար Կարապետ Ալապան: Գուցե՞ր կը պատկանէր հինգերորդ զօրաբանակին»:

ԿԼԱՏՆՍԹՆԻ ՄԱՀԸ

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ մեծ անգլիացին, Մր. Կլատսթըն մեռաւ Հինգշաբթի առտու:

ՄԵՍ ԱՐԿԱՍՏ ՄԸ

Մայիս 17 Մէրիտըն Մայիս 9 թուականով Սան-Ֆրանսիսկօյ այս անգլի Մօրնինկ Րիբբրտի քաջամ մի հեռագիր հաղորդում է թէ մի խումբ Բլոնտայք գնացողներ սարսափելի արբած են հանդիպել: Դէպքը տեղի է ունեցել երկուշաբթի օր Մայիս 2ին: Սոմմըր քաղաքէր (ըստ հեռագրի) Յրէյթը լճի մօտ սառոյցի վրայով, որ յանկարծ մի խըշըտոցով 30 ոտքի մեծութեամբ կոտորվելով՝ 25 հոգի ինկան զրին մէջ և խեղդվեցան, առանց իրենց կեանքի համար մարտնչել կարողանալու. որովհետև սառոյցը իբրև տապանաքար ծածկել էր իրենց: Այդ լուրը Սան Ֆրանսիսկօ բերողն է Տեթ. Յըրիպէլ անունով մէկը, որ ազէտը տեղի ունենալուց մի քանի ժամ յետոյ անցել է այդ տեղից: Հեռագիրը աւելցնում է թէ «Զոհերի մէջն է մի խումբ, եօթը հոգի՝ Արեւելքից, բայց իրենց անունները չգիտցվում»:

Մարտի 4ին Տիգրիսին տրված մի մասնաւոր հեռագիր հաղորդեց թէ Նէշուէից Բլոնտայք մեկնեցան եօթը Հայ երիտասարդներ, որոնցից մէկը Ենյլ Համալսարանի ուսանող էր: Կարելի է արդեօք Սան Ֆրանսիսկօի հեռագրի վերջին մասը վերաբերել այս (եօթը հոգի) Հայերին: Հեռագիրը ասում է «բայց իրենց անունները չէ գիտցվում»: Մի պարագայ որ կարելի է ենթադրել թէ իրենց անուններ լինելով Հայի անուն, միւսները գոթարութիւն են կրել յիշելու:



ՇԱՐԼՈՒԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍՔ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	1 50	Բաժանորդագիրն ԿԱՆՈՒԿ	
Եռամսեայ	75	վճարելի է միշտ:	
	40		

Ծրար կամ նամակ ուղղել Հնտեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ԴԻՒ ԵՆՈՐՔ, ՇԱՐԼՈՒ, ՄԱՅԻՍ 21 1898.

— ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ —

Երբ 1861ին ամերիկեան ներքին պատերազմը սկսեցաւ, կը կարծուէր թէ Հիւսիսայնոց բանակներն մի քանի շարաթէն պիտի ոչնչացնեն թշնամին. սակայն պատերազմը չորս տարի տևեց: Այժմեան Սպանիո-Ամերիկեան պատերազմին ալ թէ է ուրեք կը կարծեն թէ պիտի լինուի կարծ ժամանակի մէջ, բայց մենք զժուարտութիւն կը քաշենք մեր կասկածներն փարատելու համար այս մասին. և կը վախնանք որ այս փշոտ խնդրէն միջազգային անակնկալ զժուարտութիւններ յառաջ գան, և պատերազմը՝ փոխանակ մի քանի շարաթի՝ մի քանի տարիներ տևէ:

Եւրոպական կառավարութիւններն թէ և իրենց չէզոքութիւնն յայտարարեցին պաշտօնապէս, բայց վստահ ըլլալու է թէ ի սրտէ Սքանիոյ կը համակրին: Չի խորհիւր թէ քաղաքականութեան մէջ ըզըզ միայն կը գործէ, ալ շատ անգամ սիրտն ու զգացումներն ալ՝ երբ մասնաւոր կառավարութեան սիրտը ժողովրդի սրտին հետ կը արօքէ: Մանիլայի կռուէն առաջ Անգլիան Միացեալ Նահանգաց Բընական դաշնակիցը կը նկատուէր, սակայն ծովակալ Տուզիի փառաւոր յաղթութիւնը Բրիտանական նախաձեռն զբըզբեց: Անգլիան ծովային ամենազօրաւոր երկիրն ըլլալով՝ չուզեր որ ուրիշ ո՛ր և է աղք նոյն զօրութիւնն ունենայ. ուրիշներն և թէ ոչ ներկայի մէջ, գէթ ապագային այդպիսի զօրութիւն մը կրնայ իրեն սպառնալիք մը դառնալ: Արդ երբ կը լսենք թէ Անգլիա Միացեալ Նահանգաց հետ միանալու համարիտ է, ինչպէս որ յայտարարեց Մը. Չամպլըյնը իւր Ուրբաթ օրուան ճառին մէջ, կ'ստիպուինք տարօրինակ ճիշտ մը թափել այդ փափաքանաց անկեղծ և անհաշիւնդ ինքնուրու հաւատ ընծայելու համար: Անգլիոյ այս համակրութիւնն թերեւ Ֆիլիպին կղզիներն իւրացնելու համար պատրաստուած ծուղակ մ'է. գուցէ Լաֆօնթիլի ազուրի ու աղուէսի առակին նման՝ ճարտար ձան Գուլ կուզէ Լնքըլ Սամին արծուի կտուցներուն մէջ բռնուած համեղ Ֆիլիպիններու պանիրը վար ձգել տալ՝ կորզելու համար: Եթէ Միացեալ Նահանգ այդ ազուրի պէս միամիտ գտնուի, արդեօք Անգլիա պիտի կրնայ այդ համադրամ որսը կենել ու մարսել: Առակին մէջ մէկ աղուէս մը միայն կայ, իսկ այս խնդրոյ մէջ աղուէսները կէս երկրասաննակէ աւելի են, և արդէն ասոնց մի քանիներն սկզբէն ակունին սրած կ'սպասեն անհամբեր:

Գաղտնիք մը չէ այժմ թէ վերջերս Գաղղիա պատճառ մը կը փնտռէ ի նպատակ Սպանիոյ պատերազմին մէջ մըտնեալու համար: Փիլիպիններու երկու կողմերը բնակող այս ազգերը զարբեր ի վեր իրարու ո՛չ միայն եղբայրական աչքը կը նային, այլ կ'ուրեք անգամ ընտանեկան անհամաձայնութիւններ կը սեպեն: Բիւպայի ազատութիւնը Գաղղիոյ համար սպառնալիք մ'է. որովհետև նոյն կրակը կրնայ Մարթինիքի և Փանէլոփի կղզիներն ալ բռնկնել, ու Մընրօի վարչապետութեան շնորհիւ Բիւպայի բարդին արժանացնել: Եւ արդէն զժգոհութեան նշանները օրէ օր երևան կ'ենեն: Ինչու համար Սպանիոյ Ուաշինկթընի դեսպան Սենիօր Պաւլիպի, Ամերիկայէ մեկնելէ առաջ, սպանիական հպատակները միայն գաղղիական պաշտպանութեան տակ չի գրաւ, այլ թէ՛ Գաղղիոյ և թէ՛ Աւստրիոյ պաշտպանութեան յանձնեց զանոնք. վասն զի եթէ պատերազմի պատճառաւ Գաղղիոյ դեսպանն ալ մեկնէր Ամերիկայէն, Աւստրիական կարենար Սպանիացոց պաշտպանութիւնն շարունակէ: Ինչու գաղղիական Լաֆայէթ շոգեւորէր Բիւպայ գնաց՝ առանց պաշարուած նկատողութեան անելու: Ինչու Մարթինիքի կառավարութիւնն սպանիական մարտանաւերուն անուրիտուաւ, ու ամերիկեան հըրամանատարին հեռագիրը ուղարկուց 24 ժամ: Ասոնք բացայայտ կը հաստատեն թէ Գաղղիա պատճառ մը կը փնտռէ

Սպանիոյ հետ միանալու համար: Ֆրանսացոց ծովային զօրութիւնն Ամերիկայի հնգապատիկն է. անոր անցամաքելի հարստութիւնն ու զօրութիւնն կրնայ Լնքըլ Սամը յանկարծակիի բերել. բայց կը մնայ տեսնել թէ Անգլիա այս պարագայի մէջ ձեռքերը զրպանը դրած անտարբեր վկայ մը միայն պիտի ըլլայ: Եթէ Անգլիա միջամտէ, ինչ որ հաւանական է, Ռուսիա ալ ձեռնուած չի պիտի մնայ: Ինչպէս որ գաղղիական առակը կ'ըսէ թէ ամէն բանի մէջ կինը փնտռէ, այնպէս ալ քաղաքական ամէն գործերու մէջ Ռուսիան փնտռելու է հիմայ: Եւ այս խնդրոյն մէջ եւրոպական ազգաց ո՛ր և է մէկին միջամտութիւնը կը նշանակէ ընդհանուր պատերազմ մը՝ որուն նմանը դեռ չէ տեսնուած աշխարհի պատմութեան մէջ:

Սպանիո-Ամերիկեան պատերազմի արդիւնքն — Ամերիկան յաղթէ կամ յաղթուի — սա էական արդիւնքը պիտի ունենայ թէ Միացեալ Նահանգ զօրաւոր նաւատորմի մը պիտի շինէ, ու կանոնաւոր մեծ բանակ մը պիտի պահէ եւրոպական ազգաց նման, անակն որ արեւմտեան կիսագնդին մէջ ալ պիտի գտնուի մեծ տէրութիւն մը որ աշխարհի ամէն գործերուն մէջ խօսք ու ձայն պիտի ունենայ: Եւ Անգլիա, որ հիմայ բոլորովին առանձին է, զօրաւոր օգնական մը գտնելով՝ Արեւելից և Մայրագոյն Արեւելից մէջ իր խօսքն առաջ տանելու ետեւ պիտի ըլլայ: Այսպիսի միութիւն մը Ռուսիոյ շահերուն, աշխարհագրական սարածման և մանաւանդ Չինաստանը կուլ տալուն զլիաւոր արգելքը պիտի ըլլայ, և օր մը չէ օր մը Ռուսիան պիտի ստիպէ մեծին Պետրոսի գծած ուղղութեան շեղել կամ պատերազմի: Արդ այս պարագաներու տակ Ռուսիոյ համար փափաքելի չէ՞ Անկո-Ամերիկեան զաշնակցութիւնն իր օրօրոցի մէջ խնդել: Եւ այս վախ կուսայ մեղ թէ այս պատերազմ մինչև եւրոպայ կը տարածուի, և Ռուսիա որ օր մը չէ օր մը ստիպուած պիտի ըլլայ իր սուրը քաշել, պատշաճ պիտի սեպէ օգուտ քաղել առ պարագայէն, որպէսզի 20րդ դարը պայծառութեամբ կարենայ բանալ իր կայրութեան առջև: Երիտասարդ կայսեր կարգներն ու Մոսքօֆ քաղաքագէտներու դադափարն այս է թերեւս:

Եթէ վերջի տարուան քաղաքականութեան վրայ նայինք՝ պիտի տեսնենք թէ Ռուսիա աշխարհի վրայ անվիճելի առնչութիւն մը չաւանդ է, և թէ Պիլզմարքի հըրաժարած օրէն ի վեր, եւրոպական ճակատագիրը որոշող զօրութիւնն Պէռլինէ Բէթրապուրի փոխադրուած է: Գաղղիան իր անցեալը ուրանալով դաշնակցեցաւ Ռուսիոյ՝ ու արբանակի մը դերը ստանձնեց: Տաճկաստան Ռուսիոյ թեւին տակ մտաւ, և իբր անոր խոնարհ նառան կը գործադրէ իր բոլոր հրամաններն: Աւստրիան ներքին խռովութիւններէ շրջապատուած՝ Ռուսիոյ դարձուցած է իր աշխարհը՝ ի հարկին օգնութիւն խնդրելու: Գերմանիա Ռուսիոյ կը շնայ հանձնի դառնալ՝ Ֆրանսո-Ռուս դաշնակցութիւնն աւերուած համար: Իսկ Իտալիան երախտագրութեամբ ըստարկուած է Երթոյս Բի կամքն յարգել, որովհետև ան էր որ զինքը Ապիլինայէն և Մենելիքի ձեռքէն ազատեց: Ի մի բան եւրոպական կառավարութեանց սանձերն Ռուսիոյ ձեռքն են այսօր. և իր թշնամին Անգլիան է միակ: Սա, Լօրտ Մալքոմբի վերջի վարչութեան օրով, այնչափ զլուս ծոնց Ռուսիոյ, որ իւր իրական զօրութիւնը տարակուսանցա ենթարկեց: 1894 է ի վեր պահպանողականներն քաղաքական նարտի տախտակին վրայ կորսնցուցին միշտ. և ամէն կորուստ Ռուսիոյ համար յաղթութիւն մը եղաւ: Հայոց խնդիրը, Թրանսկապի մէջ ձեռնարկի ամօթալից արշաւանքը, կառավարութեան անկարողութիւնն թրանսկապի նման երկիր մը ճնշելու, վէնէզուէլայի խընդիրը, Թունուզի ու Մատակաքարի մէջ իր իրաւունքներէ հրաժարիլը, Չին-Չաբոնական պատերազմին վերջաբերութիւնն, վերջապէս Չինաստանի բաժանումն ու Գերմանիոյ և Ռուսիոյ դրաւած սքանչելի կտորները՝ անգլիական պատմութեան մէջ Լօրտ Մալքոմբի համար արատներ են, և ցոյց կուտան թէ ո՛րչափ տկարացած է ազգը՝ որու երկիրներուն վրայ արեւը չի մարիր երբէք:

Անգլիա և Ռուսիա ի վաղուց ի վեր շարունակ իրարու շփոռը երկու հրաքարեր են եղած: Արդեօք Սպանիո-Ամերիկեան պատերազմի առթիւ ասոնցմէ կայծ պիտի ելնէ այս անգամ՝ եւրոպան բռնկնելու համար. . . .

Բայց այսու հանդերձ հնար է որ պատերազմը չուտով վերջանայ, և միջողգային նորանոր դժուարութիւններ չի ծագին: Արդէն կը լսենք թէ Գերմանիա և Անգլիա համաձայնած են միասին գործել՝ պատերազմը վերջացնելու նպատակաւ: Այս ընթացքի բնական պատճառն է ցորենի և հայր գներուն բարձրանալը յեւրոպայ: Գերմանիոյ մէջ այս մտերմ Բայիսթըքի ընտրութիւններ տեղի կուրենան, և այս առթիւ ընկերվարականներն հացի խնդիրը ձեռք առած ամենուրեք զժգոհութիւն կը ցանեն՝ նոր աթոռներ չափելու համար: Իժգոհութիւնը արմատական կուսակցութեան դրամագլուխն է՝ ըսաւ Լապալ. ու վիլհելմ կայսր թափանցած ըլլալով այս ճշմարտութեան՝ կ'երևի պիտի ջանայ պատերազմը չուտով վերջանցնել՝ ընկերվարականաց ձեռքն ինկած այս նոր գէնքն ալ խելու համար: Միւս կողմէ Իտալիա և Գաղղիա ցորենի վրայ եղող մաքուր նուազցուցած են, որով պատերազմի երկարութիւնը սա Տէրութեանց քակին կը դպի. և որովհետև ասոնց սիրտերն իրենց քակին մէջ են ընդհանրապէս, ուստի ներքի է յուսալ որ այս բաւական պիտի ըլլայ խաղաղութիւնն հաստատելունալու համար:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

— Պոսթօնի մէջ վաղը հրատարակային ժողով մը պիտի գումարուի՝ դատելու համար մի քանի «առաջնակարգ գործիչ պարոններու ազգային գործունէութեանց ընթացքը»: այդ ժողովի մէջ «արդար վճիռ» պիտի արձակուի եղբր յանցաւորաց դէմ: Այս քննիչ ժողովը, որչափ կրցած ենք ստուգել, արդիւնք է կարգ մը անհամաձայնութեանց՝ որք ծագեր են Մայիս 2ին տեղի ունեցող ժողովէ մը, որ յատկացուած է եղբր Հայ կամաւորներու խնդրոյն: Պ. Վարդ Վրոյր ծանուցումները դրկած է վաղուան ժողովոյ մասին ամէն կողմ:

— Որբախնամ Տիկնանց և Լարաւնի վարչութեան վերջի հանդէսէն 500 տղարի չափ եկամուտ գոյացաւ: Թանգարանի Միութեան հանդէսէն, որմէ նոյնչափ եկամուտ կ'ակնկալէինք ներկայից բազմութիւնն և վաճառուած կաղաւորանաց ու տոմսերու քանակութիւնն ի նկատի ունենալով, գոյացած է 140 տղար միայն, որուն 50 ն ալ ծախքի յատկացուած է:

— Ուսթըրէ կը գրէ մեզ Հայկայթոռ. «Անցեալ կիրակէ կրօնական մեծ հանդէս մը տեղի ունեցաւ հոս՝ սեղուոյ Հայ Բողոքական ազգայնոց կողմէ, իրենց յատուկ ժողովարարահին մէջ: Պոսեցաւ Տ. Մ. Տօլմաճեան (Բաղաքիս համալսարանի աշակերտ), որուն նիւթն էր «կրթի» մանուկը և կրթեալ ազգ մը պիտի ունենաս»: Տ. Ս. Բաղէեան շատ մը խրատներ տուաւ ծնողաց, թէ և ինք դեռ ծնող ըլլալու փառքը չէր վախճած: Ժողովը փակուեցաւ Պատ. Բարականի աղօթքով:»

— Փրօվիտէնի Հայ նուագաժողաց խումբը Ուսթըրի Երիտասարդաց Բրիտանական ընկերութեան ժողովարարահին մէջ նուագահանդէս մը պիտի տայ Մայիս 28ի Շաբաթ երեկոյին: Մանրամասնութիւններն յաշորէ թուով պիտի հրատարակուին:

— Գոսթիկեան երգացք, որոց վաճառատունն է 139 Պրօսուէլ, ամսոյս 13ի Ուրբաթ օրն 15 հազար տղարի խալի գողցուցին իրենց վաճառատան առջևէն: Այն խալիներն նոյն օր դուրս պիտի զրկուէին այլ և այլ յանախորդներու: Կառապանն՝ Գ. Մկըրտիչեան զանոնք իր կառքին մէջ լեցնելէ յետոյ վաճառատուն կը մտնէ՝ հրամաններ ընդունելու համար. և երբ կը վերադառնայ, կառքը, ձին և խալիները գնացած կը գտնէ:

Ոստիկանութեան լուր կը տրուի անմիջապէս, որ մէկ քանի օրէն գոլոնին մեծ մասը կը գտնէ Մըլլըրի փողոցի վրայ գտնուող տուններու մէջ: Այս վերջինք աժամ գնով ծախու առած են եղբր այս արժէքաւոր գորգերն մի անձանօթ անձէ: Մէկը 7000 տղարի մի քանի կտորն 100 տղարի գնած էր:

Անցեալ երեքշաբթի օր ոստիկանութիւնն Օպարայն անուն մէկը ձերբակալեց՝ իբր մեղսակից այս գողութեան, և կը յուսացուի որ խալիներուն մեծ մասը ձեռք պիտի բերէ քիչ ատենէն, ու պիտի յաջողի գողըն արբարութեան յանձնել:

— Տիկնի Հայկանոյ Պարոնեան անցեալ շաբթու Փաթըրըքն Ուսթըր պէսայնցելութեան համար: — Ազատ Լարանի մէջ խօսեցան անցեալ շաբթու Տիար Բէպպայեան՝ Ամերիկայի կառավարական ձեւեր վրայ, և Տըթթ. Արշակունի՝ ծխելու փնտնելու վրայ: Վերջի ատենախօսին ճառք որ խնամով պատրաստուած զիտական ու պատմական կարեւոր գործ մ'էր, մեծ տպաւորութիւն թողուց ժողովրդի վրայ:

— Թանգարանի Միութեան գոցեց իր ճաշարանի մէջ բացած ընթերցարանն: Կ'ըսուի թէ ուրիշ տեղ մը պիտի վարձուի այս օրեր նոյն նպատակի համար: Յաջողութիւն:

ՆԻՒ ԵՕՐԲ ԶԵՐԱԼՏԻ ԹՂԹԱԿԻԾԲ Ի ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

97 Դեկտեմբեր 17ին, Հինգշաբթի օր Տիգրանակերտ ժամանեցին Նիւ Եօրք Զէրալտի թղթակից Տըթ. Ժորժ Զոփորդ, Մ. Սիւնայ (Պ. Սատանայ) և Եմաման անուն Ամերիկացի, Անգլիացի և Գերմանացի երեք անձինք՝ աշխարհաւէր ծանօթ դէպքին քննիչ անունով: Սուլթանի հրամանաւ Պոլսէն ընկերացած էին Իրենց՝ կրթական գործոց նախարարութեան մէջընկերակից Սըրրի Պէյ, Սուլթանի երեսփոխաններէն միտաբան Քէֆիզ, Գայմազամ Բուշտի և կրթական գործոց օտար դպրոցներու քննիչ Սալիթ Պէյ: Տեղւոյ կառավարութիւնը մեծ պատիւ ըրաւ իրենց՝ զօրքով և նուագներով դիմաւորուեցան: Օր առաջ վերաններ տարուեցան մինչև Տիգրիսի կամուրջը: Կուսակալի որոշմամբ Միւսանեան Յովհաննէս էֆէնտի կանանցի կողմէ կազմուեցան չորս շէնքերով պատուական թիւերը, այս հիւրերուն համար:

Ինչպէս Հայաստանի միւս հինգ կուսակալութեանց նկատմամբ, նոյնպէս և տեղւոյ մասին իրենց ըրած քննութիւնն կարճ եղաւ: Առաջին 24 ժամը ջրհեղեղեան տարափ մը տեղադրուեալ պատճառաւ չը կարողացան սեղերնուն շարժիլ, և ո՛չ ոք ընդունիլ. ուստի մինակ շարժիլ օր Բիւստոնեայնէն Հայ Բողոքականաց Պատ. Յակոբը հրաւիրեցին՝ հարցնելով իրմէ. «Ի՞նչպէս ինչպէս սկսաւ ի Տիգրանակերտ. քանի՞ զիւր Քառասնեան, որչա՞փ անձինք ջարդուեցան և թըլքուեցան. կարոտեալք կա՞ն ի Տիգրանակերտ թէ ոչ, և այլն»: Այդ հարցմանց ի պատասխանի, Պատ. Յակոբը անսնելով Թուրք Փաշաներն ու Պէյերը նստած իւր վկայութեան կ'ունենէր, առ երկիւզի պատասխանած է թուրքերէն թէ «կառավարութիւնը ամէն բան լաւ գիտէ, և մինակ իմ ազգիս կարօտեաններն գիտեմ»: յետոյ Աւերակի և գիւղօրէից վրայ քանի մը հարցումներ կ'ընեն. Պատուելի Յակոբը կը պարտաւորի անգլիներէն ըսել. «այ տ'օնդ նո»: Ինչնեմք այսչափով բաւականանալով՝ կը գոցեն իրենց ձեռքի անտրակը: Ի վերջոյ Պատ. Յակոբը կը հրաւիրէ զիրենք որբոց նորահաստատ պատասխարներ այցելուի, ուր կը մերժեն գնալ: Ասկից զատ և ո՛չ մի քրիստոնէի հարցում մ'ըրին: Գաղղիոյ հիւպատոսարանն անգամ չ'այցելեցին. մինակ իրիկուն մը Անգլիոյ հիւպատոսարանը թերթեցին, 1-2 ժամէն դարձան: Ետքապէս երկուդիս կուսակալութեանս իտարէ մէջիւր (այսինքն բարբարոս իսլամաց թիկունքն ու իսրայիւսիչները) կանչեցին իրենց քով և հաստատել սուրին իրենց կողմանէ յետընտրուած տեղեկագրութիւնը, որով թիւրքերն ու Գերմաները անպարտ և Գերմանեայններն յանցաւոր կը ներկայացնեն եղեր քաղաքակիրթ աշխարհի: Չը մտնամ յիշել իտարէ մէջիւրի մէջ Բիւստոնեայ անգամ կը պահսին՝ դէպքէն ի վեր. մինակ ասուն մը հին Ասորոց կաթողիկոսը և այժմ Ասորի-կաթողիկաց մթրան Բըթըրը անուն թըրքաւէր Եպիսկոպոսը հոն կը գտնուի: Սա ևս հաստատած է Հէնալտի թղթակցաց ստայոյ տեղեկագրերը:

Կիրակի առաւօտ ժամը 2ին, առաւօտեան աղօթքի ատեն, մեկնեցան տեղէն անդառնալի: ԱՄՊԵԾԻ

Ա Ձ Դ

Կիրակի երեկոյ Ազատ Լսարանի մէջ՝ 57 Ուէսթ 25րդ փողոց, պիտի խօսի Տըթ. Գարրիէլեան միշտ կարևոր նիւթի վրայ: Լսարանը կը բացուի ժամը ճիշդ 7.30 ին:

ՈՍՍԻ ՄՈՒՂ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Նէշուէ, 7 Մայիս. Այսօր տեղւոյ կամաւորներն թափօր կազմելով Բաղաքին նշանաւոր փողոցներէն անցան՝ իրենց պարտականութիւնն կատարել երթալու: Ամերիկայի և Քիւպայի դրօշներն կը ծածանէին ամէն տեղ:

Թափօրին առջևէն կ'երթային Գաղաքագետն և ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայնք: Երբ քաղաքատան առջև հասան, զինուորական քաղաքագետը երկայն քաջալերական ճառ մը խօսեցաւ իր գործերուն, զոր վերջացուց այսպէս:

«Ուրախ ըլլալու էք որ զինուոր էք այնպիսի Հայրենիքի մը՝ որ Ուսուցիչներն մ'ունեցաւ իր Հայրենիքը ազատող. Լինքը մը՝ որ գերիները ազատեց. իսկ այսօր ազատութեան որդիներս ձեռք ձեռքի սուած մեր զբաղի հարստահարեալ Քիւպայի պիտի ազատենք, և թերևս ապագային աւելի հեռաւոր երկիր մը՝ ՀԱՅՍՍՏԱՆԸ ազատենք»:

Ծաղկաբուսութիւնը ողբ դրդեցին, ու գունդը շարունակեց իւր ճամբան... ԱՌՁԻԿ

ԸՆԴԴԻՄԱՍՈՍՈՒԹԻՒՆ

Փրօվիտէնս, Ապրիլ 8. Եփրատի Յար թուին մէջ Բարափ ստորագրութեամբ նամակ մը հրատարակուած էր իմ մէկ յօդուածիս դէմ, որ Հայոց և Չինացոց Ապրիլ 12ի դատիկ հանդէսը կը նկարագրէր: Յօդուածագիրն կը զարմանայ երբ կը լսէ թէ այդ օր 500 ազգայինք ներկայ էին այդ հանդիսին, որովհետև նոյն օրն 400ի չափ Հայեր մեր ազգային ժողովարանին մէջ գումարուած կը գտնէ եղեր նոյն ժամուն, ուր «գատիկը համ հոտ ունէր»: Բայց մեր պարտն իմ մտնայ թէ երկու դատիկ հանդէսներն միևնոյն օրը առնուած չէին: Մեր գատիկը շարժի մը վերջ տեղի ունեցաւ. և այդ օր Պ. Բարափը ինք արարողութեան ատեն «որ համ ու հոտ ունէր» դուրսը՝ կունակ պատիւն տուած առջ վիճարանութեան մը բռնուած էր մի քանիներու հետ. և յետոյ ձանձրացած արարողութեանց երկարութենէն՝ մեկնեցաւ մի քանիներու հետ:

Մեր Բարափը տգէտ կ'անուանէ մեզ, որովհետև «Բարափի երկրպագուններուն հերոս կը կոչենք եղեր», բայց ընթերցողք անուշա կը հասկընան այդ բառի նշանակութիւնն, երբ յիշեն թէ քանի մը Հայերու և Հրեայներու մէջ տեղի ունեցող կռուի մը առթիւ գործածուած էր այդ: Յօդուածագիրն իզուր տեղը կասկածի կը ջանայ ենթարկել Հայ կուսուցիչներու քաջութիւնն: Եթէ ներկայ ըլլար անցեալ շարժում ասոցին գատիլն ու տեսնէր Հրեից վիճակը՝ այդ անհեթեթ տողերն չի պիտի գրէր թերևս. բայց լաւ կ'ըլլայ որ Բարափը զարդի գրէր. թո՛ղ քարափները նորոգելու գրաղի, որ աւելի յարմար գործ մ'է իրեն համար: ԲՈՒՌՎԱՌ

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՈՒՐԸ

Բաղաքին Թանգարանի Միութեան վերջի ընդհանուր նիստը տեղի ունեցաւ անցեալ Ետքապէս երեկոյ ի ներկայութեան 18ի չափ անդամոց և մի քանի հիւրերու, որոց մէջ էր նաև Տիկին Յ. Տիօնեան:

Նախորդ նիստի համառօտ միատենագրութիւնն կարգացուեցաւ նախ, որ մի քանի փոփոխութեամբ ընդունուեցաւ միաձայնութեամբ: Յետոյ Տ. Երկանեան խնամակալութեան կողմէ երկայն տեղեկագիր մը կարդաց, որ կը պատմէր ի մէջ այլոց

թէ խնամակալութիւնն ինչպէ՛ս յաջողած էր ընթերցարանն բանալ վերջապէս՝ 27րդ փողոցի ճաշարանին մէջ: Տեղեկագրի ամենէ նշանաւոր մասն էր վերջինը, որով խնամակալութիւնն կը տեղեկագրէր թէ պարտականաց քուէ մը անցուցած էր Տիգրիս լրագրին դէմ, որովհետև այս վերջինս թշնամական յօդուածներ հրատարակած է եղեր Թանգարանի ու անոր գործիչներուն մասին:

Անդամներէ ոմանք առաջարկեցին այս հոչակաւոր տեղեկագիրն ընդունիլ նոյնութեամբ. բայց որովհետև քիչ մ'առաջ ընդհանուր հաւանութեամբ վաւերացուած արձանագրութիւնն՝ ինչ ինչ հական կէտերու մէջ գլխովին կը հակասէր այս տեղեկագրի, ուրիշներ փորձեցին ետ լրկել զայն խնամակալութեան: Սակայն մասնաւոր փափաք մը կար տեղեկագիրն ընդունելու, մանաւանդ վերջի մասը՝ որ Տիգրիսի կը վերաբերէր: «Արձանագրութիւնն յիսալ էր, անգուցուցութեամբ վաւերացուցինք զայն, չէք ընդունիր» ևն. բոլորքն արձարացան ամեն կողմէ. և Տ. Թորոսեան՝ յենով իւր խորին հմտութեան վրայ՝ ժողովը այս դժուարութեանց դուրս բերելու նպատակաւ առաջարկեց որ արձանագրութիւնն չ'եղեալ համարուի, որովհետև սխալներ կը պարունակէ եղեր:

Աւելորդ է լսել թէ յողքներ բարձրացան այս տարօրինակ առաջարկին դէմ. օրինակն դժուարութիւններն բացատրուեցան մանրամասնաբար, բայց ատենապետն նկատողութեան չառաւ այս ամէնն. ու վերջապէս 4ի դէմ 12 քուէով՝ քանի մը քուէ տալով վաւերացուած ատենագրութիւնն, որ նախորդ նիստի ճշգրիտ պատկերն էր, սուանց կարմրելու յետս կոչեցին, ճիշդ այնպէս, որպէս զպրօցի տղաքներն իրենց գծած մէկ սխալ կէտը կամ փոքր կը լզեն՝ առանց ո՛ր է խղճահարութեան: Եւ ասոնք են այն մարդիկը որոց վիճակուած է Հայ գաղթականութեան մէջ լոյս ու գիտութիւն սփռել...:

Յաջորդ խնդիրն էր տեղեկագիրը, խնամակալութեան գլուխ գործոցը լինելու արժանի մի գրական գործ, զոր նոյնութեամբ ընդունելու առաջարկներ եղան քանի մը տեղերէ: Տիգրան ատենապետն հանգիստ մի շունչ առաւ այս պահուս, զի ժամանակն եկած էր մահաբաժնի հարուածը տալու: Հոս միջանկեալ կերպիւ կարծէ ըսել թէ Ատենապետն թէեւ գայրացած էր Տիգրիսի դէմ, բայց կը փորձէր իր գայրոյթը բռնադրոսի ժպիտներու օտակ ծածկել: Այս ճայրայեղ բարեգործեան միակ պատճառն էր Տիգրիսի 27րդ թուին մէջ հրատարակեալ Պ. Թ. Չ. է գրուած Գրօնիկին մէջ ըսուած այս խօսքերն թէ՛ «Թանգարանի Միութեան ատենապետի բացման ճառը՝ վերջի հրապարակային հանդիսին մէջ, փոխանակ հանդիսականներուն բարի գալուստ մաղթելու և յայտագրերը բացատրելու՝ անկապ ու անտեղի յարձակում մըն էր խնամակալութեան քննադատներուն»:

Յիշեալ խնդիրն քուէի դրուելէ առաջ Տ. Էկինեան յանուն մամլոյ բողոքեց խնամակալութեան այդ քայլին դէմ, որովհետև այդ պաշտօնէից իրաւասութեան վեր կը գտնուի թերթերու դէմ քուէ անցունել. և բաց աստի տղապիսի քայլ մը անտեղի ու սղայական կը նկատէր բազմադիմի փաստերով: Եթէ այդ քուէն վաւերացնենք այս երեկոյ, ըսաւ ի մէջ այլոց, ո՛չ թէ միայն պատիւ մ'ըրած պիտի ըլլանք մեր թոյլ ու անպատուաբեր ընթացքը քննադատող լրագրին, այլ և ամօթ ու անարբել մուր

մը բերած պիտի ըլլանք այս Միութեան ճակատին, որոյ նպատակն մամլոյ հետ սերտ յարաբերութիւն ունեցած է միշտ: Սոյն անխորհուրդ քայլն անարգանք մ'է Թանգարանի նպատակին, ու բացայայտ նշան մ'է զայն բերող մեր խնամակալ պաշտօնէից խորունկ տգիտութեան: Ո՛չ ոք պատասխանեց այս խօսքերուն, զի Տիգր ատենապետն՝ ընդդիմախօսներուն թոյլ չի առաւ խօսիլ՝ վախճալով թէ մի՞ գուցէ գաղափարաց ընդհարումէն լոյս ծագէր ու մութ մըտքերն լուսաւորուէին յանկարծ: Գուէ պահանջեցին ամէն կողմէ. քուէ միայն: Այս պահուս ուրիշ անգամ մը չի կրնալով դիմանալ ատենապետի ապօրէն ուղղութեան՝ բողոքեց ու կուռի բռնուեցաւ անոր հետ: Մեր յարգելի ատենապետն հրաման ըրաւ որ այդ ըմբոստ անձը դուրս հանեն անմիջապէս: Չայնք ու խօսովութիւն: Խնդիրն պիտի կրնար գէշ հետևանքներ ունենալ, եթէ մամլոյ ջատագովներէն միւս չի միջամտէր բողոքողի և ատենապետի միջև: Այսպիսի անխորժ դէպքեր երկու երեք անգամ պատահեցան ատենապետի և անդամներուն մէջ, բայց ամէն անգամ կարելի եղաւ խաղաղութիւնն վերահաստատել, զէթ ի յարգանս գեղեցիկ սեռին:

Վերջապէս խնդիրը քուէի դրուեցաւ այս «Հաւատաքնութեան» նոր ատենին առջև, և 4ի դէմ 12 քուէով հոչակաւոր տեղեկագիրն ընդունուեցաւ նոյնութեամբ, որ կարծես միակ խնդիրն էր ժողովայ առջև, զի վերջարկութեան վերջ ամէն կողմէ փակման առաջարկներ սկսեցին լսուիլ:

Այս տեղեկագիրն մեծ յաջողութեամբ պաշտպանեցին խնամակալութեան հմուտ անդամներ Տիգրաբերկանեան, Ազատեան, Պուրտանեան, Մարութեան և Չուլճեան. իսկ պարզ անդամներէ Տիգր Էմոնը Չանգալեան, որ իր անունն հայերէն լեզուով գրելու կարող անձ մ'է, և Տիգր Թուրքին Պետրոս Թորոսեան, քաղաքիս Միացեալ Աստուածաբանական վարժարանի ուսանողն, գրագէտ ու հմուտ հեղինակ. իսկ ֆինացեալ մի քանի անդամներն մեքենարար քուէ տուին խնամակալութեան հետ:

Տ. Էկինեան առաջարկեց որ պարտականաց քուէի օրինակն քանի մը Հայերէն թերթերու զրկուի ի հրատարակութիւն: Բայց Տիգր Ատենապետն անհամաձիտ էր ասոր, զի այդպիսի քայլ մը կրնար ձրի ծանուցում ըլլալ Տիգրիսի համար:

Այլ խնդիր չ'կար. ատենը դոցուելու վրայ էր, երբ Տ. Ատենապետը ժողովոյ բեմէն իբր վերջի խօսք ու գեկոյց՝ խնդրեց անդամներէ որ Տիգրիսէ հեռի մնան ու զայն սուսնեան անգամ չի մտցեն: Արժանայարգ ատենապետն՝ որոյ հմտութեան վրայ դժուար է կասկածիլ, Տիգրիսը նմանցուց Բաղաքին մէջ հրատարակուած Ուօրլա և ձըրնըլ մեծ՝ բայց քննադատելի օրաթերթերուն:

Ժողովը գոցուեցաւ ժամը 11ին, որոյ ատենապետն էր Տ. Տ. Տիօնեան: ԱՆԴԱՄ ՄԸ

Հրատարիմ ի Միութենէ Թանգարանից Նիւ Եօրքի, Ի բանադրող նախագահէ նորա, Յիւնեակոյ թանգարանապետնորա ի կատակարան գանձապետէ նորա. Յօրհնագէտ քարտուղարէ նորա, Յաստուածաբան փաստաբանէ նորա ի փոփոխամիտ խնամակալութեան նորա և յամենայն շար գնացից եւ պատրանաց նորա հրատարակող հրատարիմ: ՍՈՒՒՆ

—Յառաջիկայ շաբաթ Մայիս 28, երեկոյեան ժամը 7.30ին Ս. Ոսկեբերան եկեղեցոյ մէջ երեկոյեան ժամերգութիւն, Լոյս գուարթիւն Անդատանի արարողութիւն պիտի կատարուի, և քարոզ պիտի խօսուի:

